

**16. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅ ՈՒՆՆԵՐ**  
**TRADE AND OTHER SERVICES**  
**ТОРГОВЛЯ И ПРОЧИЕ УСЛУГИ**

Բաժնում ներկայացված են առևտրի և ծառայությունների ոլորտը բնութագրող վիճակագրական տվյալներ:

**Առևտրի շրջանառությունը** ներառում է մանրածախ և մեծածախ առևտրի շրջանառությունը, ինչպես նաև ավտոմեքենաների առևտուրը:

Առևտրի շրջանառության ցուցանիշը հաշվարկվում է առանց ավելացված արժեքի հարկի և այլ անուղակի հարկերի:

**Մանրածախ առևտրի շրջանառությունը** վերջնական սպառման կամ տնային տնտեսությունում օգտագործման համար նախատեսված սպառողական ապրանքների վաճառքն է արժեքային արտահայտությամբ:

Մանրածախ առևտրի շրջանառության ցուցանիշը ձևավորվում է ըստ առևտրի օբյեկտների՝ խանութների, կրպակների, առևտրի այլ օբյեկտների (շարժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ առևտրի կետերի), ինչպես նաև առևտրի իրականացման վայրերի՝ սպառողական ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի շուկաների, միջոցով իրականացված առևտրի շրջանառության հիման վրա:

**Ապրանքային պաշարները** յուրաքանչյուր ամսվա 1-ի դրությամբ, հաշվարկված առևտրի շրջանառության օրերով, հաշվարկվում է որպես առևտրի օբյեկտների ապրանքային պաշարների միջին ամսական ծավալի և տվյալ ամսվա առևտրի շրջանառության մեկ օրվա ծավալի հարաբերակցություն:

The section contains statistical data characterising trade and services.

**Trade turnover** includes retail trade turnover, wholesale trade turnover and motor vehicle trade. Trade turnover index is calculated excluding value added tax and indirect tax.

**Retail trade turnover is** the sale of consumer commodities for final consumption or for household use in value terms.

The retail trade turnover index is formed by trade buildings - shops, kiosks, other trade buildings (retail trade shops for motor and domestic fuel), as well as by trade realization places based on the trade turnover from consumer goods and agricultural products market.

**Commodity stocks** calculated by days of trade turnover as of the 1<sup>st</sup> of each month is calculated as correlation of average monthly volume of commodity stocks of trade units and trade turnover volume per day of the given month.

В разделе представлены статистические данные, характеризующие сферу торговли и услуг.

**Оборот торговли** включает оборот розничной торговли, оборот оптовой торговли и торговлю автомобилями. Показатель оборота торговли рассчитан без налога на добавленную стоимость и других косвенных налогов.

**Оборот розничной торговли** представляет собой стоимость проданных потребительских товаров для конечного потребления или использования в домашнем хозяйстве.

Показатель оборота розничной торговли формируется на основе оборота объектов торговли - магазинов, киосков, других объектов торговли (объекты розничной торговли моторного и бытового топлива), а также местами осуществления торговли - рынков потребительских товаров и рынков потребительских товаров и сельхозпродуктов.

**Товарные запасы** на 1-ое число каждого месяца, рассчитанные по дням оборота торговли, исчисляются как соотношение среднего объема товарных запасов за месяц к объему однодневного оборота торговли за данный месяц.

**Մեծածախ** է համարվում **առևտրի** այն տեսակը (գործունեությունը), երբ գնորդը մեծ խմբաքանակով ապրանքներ է ձեռք բերում դրանց հետագա վերավաճառքի համար այլ վաճառողներին, վերամշակողներին, բայց ոչ վերջնական սպառողներին՝ համապատասխան հաշվարկային փաստաթղթերով: Մեծածախ առևտրի շրջանառության ցուցանիշը ներառում է նաև արտահանման ծավալները (բացառությամբ արտադրողների կողմից անմիջական արտահանումը, ինչպես նաև գազի և էլեկտրաէներգիայի արտահանումը):

**Ավտոմեքենաների առևտուրը** ներառում է ինչպես մասնագիտացված առևտրի կետերի միջոցով իրականացված ավտոմեքենաների, դրանց մասերի և պարագաների վաճառքը, այնպես էլ դրանց տեխնիկական սպասարկումը և նորոգումը:

**Ծառայությունների ծավալն** արտացոլում է մատուցված տարբեր տեսակի ծառայությունների ծավալը և հաշվառվում է այն ժամանակաշրջանի համար, որի ընթացքում մատուցվել են ծառայությունները, անկախ վճարումից, առանց ավելացված արժեքի և այլ նմանատիպ (անուղղակի) հարկերի: Ցուցանիշը չի ներառում նաև պետպատվերով իրականացված ծառայությունների ծավալը:

Ծառայությունների ծավալի ցուցանիշը ձևավորվում է կացության և հանրային սննդի կազմակերպման, մշակույթի, զվարճությունների և հանգստի (ստեղծագործական, արվեստի և հանդիսավոր ներկայացումների կազմակերպման, գրադարանների, արխիվների, թանգարանների և այլ մշակութային կազմակերպությունների

**Wholesale trade** is that type (activity) of trade, when the purchaser buys big consignment of goods by corresponding invoice with the purpose of further resale to salers reproqcessors, but not to the final consumers. Indicator of wholesale trade turnover includes the export volumes (excluding the direct export by the producers, as well as gas and electricity export).

**Motor vehicle trade** includes both sale of motor vehicles, related parts and accessories, and maintenance and repair of motor vehicles via specialised trade units.

**The volume of services** reflects the volume of various types of rendered services and is registered for the period during which the services are rendered, regardless of payment, without value-added and similar (indirect) taxes. The indicator doesn't include also the volume of services implemented in state order.

The indicator on volume of services is formed from the following services: accommodation and food service activities, arts, entertainment and recreation (creative, arts and entertainment activities, libraries, archives, museums and other cultural activities, gambling and betting activities, sports activities and amusement and recreation activities), education (pre-primary education, primary education, secondary education, higher education, other

**Оптовым** считается тот вид **торговли** (деятельность), когда покупатель с соответствующими расчетными документами приобретает товары большими партиями для дальнейшей перепродажи другим продавцам, перерабатывающим объектам, но не конечным потребителям.

Показатель оборота оптовой торговли включает также объемы экспорта (за исключением экспорта непосредственно производителями, а также экспорта газа и электроэнергии).

**Торговля автомобилями** включает как продажу автомобилей, их деталей и принадлежностей через специализированные торговые объекты, так и техническое обслуживание и ремонт.

**Объем услуг** отражает объем предоставленных различных видов услуг и статистически измеряется за тот период, в течении которого были предоставлены услуги, независимо от формы оплаты, без налога на добавленную стоимость и других косвенных налогов, а также объема услуг госзаказа .

Показатель объема услуг формируется из следующих видов услуг: организации проживания и общественного питания, культуры, развлечения и отдыха (артистическая и прочая деятельность в области искусства и проведения культурно-массовых развлекательных мероприятий, деятельность библиотек, архивов, музеев и прочих учреждений культуры, организация

գործունեության, շահումով խաղերի կազմակերպման, սպորտի, զվարճությունների և հանգստի կազմակերպման), կրթության (նախադպրոցական, տարրական, միջնակարգ, նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական, այլ կրթություն՝ մարմնամարզության, սպորտի, մշակույթի բնագավառում, հաշվապահական, օտար լեզուների, համակարգչային և այլ դասընթացներ), առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման, անշարժ գույքի հետ կապված գործունեության (սեփական անշարժ գույքի առուվաճառքի, սեփական կամ վարձակալված անշարժ գույքի հանձնում վարձակալության և այլն), տեղեկատվության և կապի (հրատարակչության, կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի արտադրության, երաժշտական և այլ ձայնագրությունների հրատարակչության, հեռուստածրագրերի կազմման և հեռարձակման, հեռահաղորդակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների), տրանսպորտի՝ օդային, ցամաքային (ավտոմոբիլային, երկաթուղային, էլեկտրատրանսպորտ) առանց խողովակաշարայինի, փոստային և սուրհանդակային գործունեության, վարչարարական և օժանդակ գործունեության (վարձույթի և լիզինգի, զբաղվածության հարցերին առնչվող գործունեության, զբոսաշրջային, անվտանգության ապահովման և հետաքննությունների, շենքերի սպասարկման և բնատեսարանի բարեկարգման և ձեռնարկատիրական գործունեության), մասնագիտական, զիտական և տեխնիկական գործունեության (իրավաբանական և հաշվապահական գործունեության, գլխամասային գրասենյակների և

education: sports and recreation education, cultural education, accountant education, foreign languages education, computer and other courses education), human health and social work activities, real estate activities (buying and selling of own real estate, renting and operating of own or leased real estate etc), information and communication (publishing activities, motion picture, video and television programme production, sound recording and music publishing activities, television programming and broadcasting activities, telecommunications, computer related services), transport: air transport, land transport (motor vehicles, railroad lines, electric transport) without transport via pipeline, postal and courier activities, administrative and support service activities (rental and leasing activities, employment activities, tourism, security and investigation activities, services to buildings and landscape activities), professional, scientific and technical activities (legal and accounting activities, management consultancy activities, architectural and engineering activities, technical testing and analysis, advertising and market research, veterinary activities, other professional, scientific and technical activities n.e.c.), financial and insurance activities, other service activities (repair of computers and personal and household goods, washing and (dry-)cleaning of textile and fur products, other beauty treatment, funeral and related activities, physical well-being activities etc).

азартных игр, спортивная и прочая деятельность по организации отдыха и развлечений), образования (дошкольное, начальное, среднее образование, техническое и профессиональное среднее образование, высшее и послевузовское образование, прочая образовательная деятельность: в области физической культуры, спорта и культуры, обучение на курсах иностранных языков, на компьютерных курсах, на бухгалтерских курсах и прочих курсах), здравоохранения и социального обслуживания населения, операций с недвижимым имуществом (покупка и продажа собственного недвижимого имущества, сдача внаем собственного, арендованного недвижимого имущества и прочая деятельность с недвижимым имуществом), информации и связи (издательская деятельность, производство, распространение и показ кинофильмов, видео и телевизионных программ, звукозапись и издание музыки, предоставление телекоммуникационных услуг, деятельность в области информационной технологий), транспорта-воздушного, наземного (автомобильный, железнодорожный и электротранспорт) без трубопроводного, почтовой и курьерской деятельности, административной и вспомогательной деятельности (аренда и лизинг, деятельность в области занятости и туризма, обеспечение функционирования систем безопасности и расследований, деятельность по обслуживанию зданий, предпринимательская деятельность), в области управления и консультирования, деятельность в области архитектуры и инженерных изысканий, научные исследования и разработки, рекламная деятельность и изучение рынка, ветеринарная деятельность и прочая профессиональная, научная и техническая деятельность), финансовой и страховой деятельности и других услуг в сфере обслуживания (ремонт компьютеров, предметов личного пользования и бытовых

կառավարման հարցերով խորհրդատվական գործունեության, ճարտարապետական և ճարտարագիտական, տեխնիկական փորձարկումների, գիտական հետազոտությունների և մշակումների, գովազդային և շուկայի իրավիճակի հետազոտության, անասնաբուժական գործունեության, այլ մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության), ֆինանսական և ապահովագրական գործունեության, սպասարկման այլ ծառայությունների (համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգման, անհատական՝ մանածագործական և մորթե ատադրատեսակների լվացման և մաքրման, վարսավիրանոցների և գեղեցկության սրահների, թաղումների կազմակերպման, բաղնիքների և այլն) ծավալից:

товаров, индивидуальное обслуживание: стирка, химическая чистка и окрашивание текстильных и меховых изделий, деятельность парикмахерских и салонов красоты, организация похорон, деятельность бань и прочее).

ԱՌԵՎՏՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ  
 MAIN INDICATORS OF TRADE  
 ОСНОВНЫЕ ПОКАЗАТЕЛИ ТОРГОВЛИ

16.1. ԱՌԵՎՏՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ<sup>1</sup>

MAIN INDICATORS OF TRADE<sup>1</sup>

ОСНОВНЫЕ ПОКАЗАТЕЛИ ТОРГОВЛИ<sup>1</sup>

	2016	2017	2018	2019	2020	
Մլն. դրամ (ընթացիկ գներով) Mln. drams (at current prices) Млн. драмов (в текущих ценах)						
Առևտրի շրջանառություն, ընդամենը այդ թվում՝	2 234 376.3	2 605 972.0	2 933 313.0	3 280 507.1	2 918 784.8	Trade turnover, total Оборот торговли, всего
Մանրածախ առևտրի շրջանառություն	1 243 637.0	1 335 742.8	1 411 771.8	1 549 987.0	1 325 252.5	including: в том числе: Retail trade turnover Оборот розничной торговли
Մեծածախ առևտրի շրջանառություն	895 883.6	1 156 517.6	1 389 714.6	1 589 855.9	1 484 696.7	Wholesale trade turnover Оборот оптовой торговли
Ավտոմեքենաների առևտուր	94 855.7	113 711.6	131 826.6	140 664.2	108 835.6	Motor vehicle trade Торговля автомобилями
Նախորդ տարվա նկատմամբ, % (համադրելի գներով) In % to previous year (at comparable prices) К предыдущему году % (в сопоставимых ценах)						
Առևտրի շրջանառություն, ընդամենը	101.1	114.2	108.8	109.9	87.8	Trade turnover, total Оборот торговли, всего
Մանրածախ առևտրի շրջանառություն	97.4	105.5	101.4	107.8	84.5	Retail trade turnover Оборот розничной торговли
Մեծածախ առևտրի շրջանառություն	104.6	126.3	116.5	112.4	92.1	Wholesale trade turnover Оборот оптовой торговли
Ավտոմեքենաների առևտուր	122.5	115.0	116.8	106.3	74.4	Motor vehicle trade Торговля автомобилями
2015թ. նկատմամբ, % (համադրելի գներով) In % to 2015 (at comparable prices) К 2015 году % (в сопоставимых ценах)						
Առևտրի շրջանառություն, ընդամենը	101.1	115.5	125.6	138.1	121.2	Trade turnover, total Оборот торговли, всего
Մանրածախ առևտրի շրջանառություն	97.4	102.8	104.2	112.3	94.9	Retail trade turnover Оборот розничной торговли
Մեծածախ առևտրի շրջանառություն	104.6	132.1	153.9	173.0	159.3	Wholesale trade turnover Оборот оптовой торговли
Ավտոմեքենաների առևտուր	122.5	140.9	164.5	174.9	130.1	Motor vehicle trade Торговля автомобилями

<sup>1</sup> Առանց ավելացված արժեքի հարկի և այլ անուղղակի հարկերի:  
 Excluding value added tax and other indirect taxes.  
 Без налога на добавленную стоимость и других косвенных налогов.

16.2. ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ  
 MAIN INDICATORS OF RETAIL TRADE  
 ОСНОВНЫЕ ПОКАЗАТЕЛИ РОЗНИЧНОЙ ТОРГОВЛИ

	2016	2017	2018	2019	2020	
Մանրածախ առևտրի շրջանառությունը, մլն. դրամ	1 243 637.0	1 335 742.8	1 411 771.8	1 549 987.0	1 325 252.5	Retail trade turnover, mln drams Оборот розничной торговли, млн. драмов
Մանրածախ առևտրի շրջանառությունը բնակչության մեկ շնչի հաշվով, դրամ	415 612.4	448 326.1	475 504.1	523 202.4	447 493.7	Total volume of retail trade turnover per capita, drams Оборот розничной торговли на душу населения, драмов
Ապրանքային պաշարները մանրածախ առևտրում						Stock of commodities in retail trade Товарные запасы в розничной торговле
Ծավալը տարեվերջին, մլն. դրամ	144 340.6	168 101.0	194 265.3	199 877.9	224 988.6	volume at the end of year, mln.drams объем на конец года, млн. драмов
ապահովվածությունն օրերով	21	20	19	18	23	provision with days обеспеченность в днях

16.3. ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ԻՆԴԵՔՍՆԵՐՆ ԸՍՏ  
 ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ<sup>1</sup> (համադրելի գներով)

PHYSICAL VOLUME INDICES OF RETAIL TRADE TURNOVER BY TYPES OF COMMODITY<sup>1</sup>  
 (at comparable prices)

ИНДЕКСЫ ФИЗИЧЕСКОГО ОБЪЕМА ОБОРОТА РОЗНИЧНОЙ ТОРГОВЛИ ПО ВИДАМ ТОВАРОВ<sup>1</sup>  
 (в сопоставимых ценах)

(նախորդ տարվա նկատմամբ, %)

(in % to previous year)  
 (к предыдущему году, %)

	2016	2017	2018	2019	2020	
Պարենային ապրանքներ	97.6	104.2	109.1	109.4	85.7	Food products
դրանից՝						Продовольственные товары of which:
ալկոհոլային խմիչքներ	97.0	95.7	109.6	103.5	72.1	из них: alcoholic beverages алкогольные напитки
Ոչ պարենային ապրանքներ	96.9	111.4	108.4	113.4	84.2	Non-food products Непродовольственные товары

<sup>1</sup> Այստեղ և հետագայում՝ պարենային և ոչ պարենային ապրանքատեսակներին վերաբերող ցուցանիշները հաշվարկված են միայն խանութների կողմից իրականացվող մանրածախ առևտրի շրջանառության ծավալներով:  
 Here and hereinafter: the indicators on food and non-food products are calculated according to the volumes of retail trade turnover carried out only by shops.  
 Здесь и далее: показатели продовольственных и непродовольственных товаров рассчитаны объемами оборота розничной торговли, осуществляемыми только магазинами.



16.4. ՊԱՐԵՆԱՅԻՆ ԵՎ ՈՉ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
 FOOD AND NON-FOOD PRODUCTS RATIO IN RETAIL TRADE TURNOVER  
 УДЕЛЬНЫЙ ВЕС ПРОДОВОЛЬСТВЕННЫХ И НЕПРОДОВОЛЬСТВЕННЫХ ТОВАРОВ В ОБОРОТЕ РОЗНИЧНОЙ ТОРГОВЛИ

(%)	2016	2017	2018	2019	2020	
Մանրածախ առևտրի շրջանառությունը	100	100	100	100	100	Retail trade turnover Оборот розничной торговли
Պարենային ապրանքների տեսակարար կշիռն առևտրի շրջանառությունում	58.9	58.6	58.3	57.6	58.0	Share of food goods in trade turnover Удельный вес продовольственных товаров в обороте торговли
Ոչ պարենային ապրանքների տեսակարար կշիռն առևտրի շրջանառությունում	41.1	41.4	41.7	42.4	42.0	Share of non food goods in trade turnover Удельный вес непродовольственных товаров в обороте торговли

16.5. ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ  
 RETAIL TRADE TURNOVER BY OBJECTS AND TYPES OF TRADE LOCATIONS  
 ОБОРОТ РОЗНИЧНОЙ ТОРГОВЛИ ПО ОБЪЕКТАМ И ВИДАМ МЕСТ ОСУЩЕСТВЛЕНИЯ ТОРГОВЛИ

	2016	2017	2018	2019	2020	
Մլն. դրամ - Mln. Drams- Млн. драмов						
Մանրածախ առևտրի շրջանառություն, ընդամենը	1 243 637.0	1 335 742.8	1 411 771.8	1 549 987.0	1 325 252.5	Retail trade turnover- total Оборот розничной торговли, всего
խանութների	963 217.3	1 064 219.8	1 125 064.9	1 243 109.6	1 080 875.7	shops магазинов
սպառողական ապրանքների շուկաների	81 229.7	69 099.6	70 415.7	68 321.6	50 651.6	consumer goods markets рынков потребительских товаров
գյուղատնտեսական արտադրանքի շուկաների	18 556.5	20 492.8	15 606.4	13 044.0	12 467.2	agricultural products markets рынков сельхозпродукции
կրպակների	27 504.4	27 751.2	27 128.4	30 628.1	22 533.4	kiosks киосков
առևտրի այլ օբյեկտների	153 129.1	154 179.4	173 556.4	194 883.7	158 724.6	other trade units других объектов торговли

Ընդհանուրի նկատմամբ, % -In % to total-К итоду, %

	2016	2017	2018	2019	2020	
Մանրածախ առևտրի շրջանառություն, ընդամենը	100	100	100	100	100	Retail trade turnover- total Оборот розничной торговли, всего
խանութների	77.5	79.7	79.7	80.2	81.6	shops магазинов
սպառողական ապրանքների շուկաների	6.5	5.2	5.0	4.4	3.8	consumer goods markets рынков потребительских товаров
գյուղատնտեսական արտադրանքի շուկաների	1.5	1.5	1.1	0.8	0.9	agricultural products markets рынков сельхозпродукции
կրպակների	2.2	2.1	1.9	2.0	1.7	kiosks киосков
առևտրի այլ օբյեկտների	12.3	11.5	12.3	12.6	12.0	other trade units других объектов торговли

16.6. ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ Ք.ԵՐԵՎԱՆԻ  
 RETAIL TRADE TURNOVER BY MARZES AND YEREVAN CITY  
 ОБОРОТ РОЗНИЧНОЙ ТОРГОВЛИ ПО МАРЗАМ И Г. ЕРЕВАН

(մլն. դրամ)

(mln. drams)  
(млн. драмов)

	2016	2017	2018	2019	2020	
Հայաստանի Հանրապետություն	1 243 637.0	1 335 742.8	1 411 771.8	1 549 987.0	1 325 252.5	Republic of Armenia Республика Армения
Ք. Երևան	920 522.7	989 557.3	1 027 811.6	1 136 630.8	931 761.7	Yerevan city г.Ереван
Արագածոտն	15 014.6	16 916.2	19 910.9	22 911.6	22 564.8	Aragatsotn Арагацотн
Արարատ	38 835.9	44 540.3	54 454.9	62 878.0	58 953.4	Ararat Арарат
Արմավիր	44 963.3	43 468.5	49 862.2	54 395.6	56 975.2	Artavir Армавир
Գեղարքունիք	20 679.0	22 951.6	27 366.6	28 468.5	30 028.6	Gegharkunik Гегаркуник
Լոռի	46 265.8	44 635.8	44 290.4	44 505.9	33 478.7	Lori Лори
Կոտայք	64 536.7	61 991.7	64 981.4	71 181.8	69 930.0	Kotayk Котайк
Շիրակ	46 605.2	51 500.4	58 047.5	59 786.0	56 542.1	Shirak Ширак
Սյունիք	15 748.1	19 448.1	22 717.3	24 166.0	25 875.9	Syunik Сюник
Վայոց ձոր	5 229.6	7 275.9	8 263.6	8 033.4	8 543.6	Vayots Dzor Вайоц Дзор
Տավուշ	25 236.1	33 457.0	34 065.4	37 029.4	30 598.5	Tavush Тавуш



16.7. ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ Ք.ԵՐԵՎԱՆԻ  
 STRUCTURE OF RETAIL TRADE TURNOVER BY MARZES AND YEREVAN CITY  
 СТРУКТУРА РОЗНИЧНОЙ ТОРГОВЛИ ПО МАРЗАМ И Г. ЕРЕВАН

(ընդհանուրի նկատմամբ, %)

(in % to total)  
(к итогу, %)

	2016	2017	2018	2019	2020	
Հայաստանի Հանրապետություն	100	100	100	100	100	Republic of Armenia Республика Армения
Ք. Երևան	74.0	74.1	72.8	73.3	70.3	Yerevan city г.Ереван
Արագածոտն	1.2	1.3	1.4	1.5	1.7	Aragatsotn Արագածոտն
Արարատ	3.1	3.3	3.9	4.1	4.4	Ararat Արարատ
Արմավիր	3.6	3.3	3.5	3.5	4.3	Armenia Արմավիր
Գեղարքունիք	1.7	1.7	2.0	1.8	2.3	Gegharkunik Գեղարքունիք
Լոռի	3.7	3.3	3.1	2.9	2.5	Lori Լորի
Կոտայք	5.2	4.6	4.6	4.6	5.3	Kotayk Կոտայք
Շիրակ	3.8	3.9	4.1	3.9	4.3	Shirak Շիրակ
Սյունիք	1.3	1.5	1.6	1.5	2.0	Syunik Սյունիք
Վայոց ձոր	0.4	0.5	0.6	0.5	0.6	Vayots Dzor Վայոց Զոր
Տավուշ	2.0	2.5	2.4	2.4	2.3	Tavush Տավուշ

16.8. ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ  
 COMMODITY STRUCTURE OF RETAIL TRADE TURNOVER  
 ТОВАРНАЯ СТРУКТУРА ОБОРОТА РОЗНИЧНОЙ ТОРГОВЛИ

(ընդհանուրի նկատմամբ,%)

(in % of total)

(к итогу, %)

	2016	2017	2018	2019	2020	
Բոլոր ապրանքները	100	100	100	100	100	Goods-total Все товары
Պարենային ապրանքներ դրանցից՝	58.9	58.6	58.3	57.6	58.0	Food products Продовольственные товары of which:
միս և մսամթերք	6.7	6.5	6.7	6.2 <sup>♦</sup>	7.9	meat and meat products мясо и мясопродукты
այդ թվում՝						including:
անասնի և թռչնի միս	5.2	5.2	5.4	5.0	6.2	beef and poultry meat мясо животных и домашней птицы
մսամթերք	1.3	1.1	1.1	1.0	1.4	meat products продукты из мяса
մսի պահածո	0.2	0.2	0.2	0.2	0.3	canned meat консервы мясные
ձուկ և ձկնամթերք	0.4	0.3	0.3	0.3	0.4	fish and fish products рыба и рыбопродукты
պահածոյացված միրգ և բանջարեղեն	0.3	0.2	0.4	0.4	0.6	canned fruit and vegetables консервированные фрукты и овощи
սննդային յուղեր և ճարպեր	4.8	5.2	5.2	4.8	5.7	edible oils and fats пищевые масла и жиры
որից՝						of which:
կենդանական յուղ	1.5	1.5	1.7	1.5	1.8	butter животное масло
բուսական յուղ	2.0	1.7	1.7	1.7	2.3	vegetable oil растительное масло
մարգարին և համանման սննդային յուղեր	0.6	0.7	0.7	0.6	0.8	margarine and similar edible oils
այլ սննդային յուղեր և ճարպեր	0.7	0.6	0.5	0.4	0.5	маргарин и подобные пищевые масла other edible oils and fats прочие пищевые масла и жиры
կաթ և կաթնամթերք	2.1	2.2	2.2	2.1	2.6	milk and dairy products молоко и молочные про- дукты
որից՝						of which:
պանիր	1.0	1.0	1.1	1.0	1.2	из них: cheese сыр
ձու	0.5	0.5	0.5	0.5	0.7	eggs яйца
շաքար	3.3	3.3	3.2	2.9	3.8	sugar сахар
շաքարային հրուշակեղեն	2.3	2.4	2.4	2.5	3.0	confectionery products кондитерские изделия
թեյ, սուրճ, կակաո, համեմունքներ	1.1	1.0	1.1	1.2	1.4	tea, coffee, cocoa, spices чай, кофе, какао, специи
կերակրի աղ	0.2	0.2	0.1	0.1	0.2	edible salt соль пищевая
հաց և հացաբուլկեղեն	14.3	11.9	9.3	7.1	8.4	bread and bakery products хлеб и хлебобулочные изделия
ալյուր, ձավարեղեն և մակարոնեղեն	3.5	3.6 <sup>♦</sup>	3.3	3.0	4.2	flour, groats and pasta мука, крупа и макаронные изделия

	2016	2017	2018	2019	2020	
ալյուր	2.5	2.6	2.3	2.0	2.7	flour мука
ձավարեղեն	0.4	0.5	0.5	0.5	0.8	groats крупя
մակարոնեղեն	0.6	0.5	0.5	0.5	0.7	pasta макаронные изделия
կարտոֆիլ	0.3	0.4	0.4	0.4	0.5	potatoes картофель
բանջարեղեն	0.3	0.3	0.4	0.4	0.5	vegetables овощи
մրգեր	1.1	1.4	1.6	1.6	1.9	fruits фрукты
ալկոհոլային խմիչք	7.2	6.4	6.3	5.9	5.5	alcoholic beverages алкогольные напитки
ծխախոտային արտադրատեսակներ	3.7	4.2	4.3	4.6	5.9	tobacco products табачные изделия
Ոչ պարենային ապրանքներ	41.1	41.4	41.7	42.4	42.0	Non-food products Непродовольственные
դրանցից՝						товары of which:
գործվածք	0.6	0.6	0.6	0.6	0.7	fabrics из них:
բամբակյա	0.3	0.3	0.3	0.4	0.4	fabrics ткани
բրդյա	0.2	0.2	0.2	0.1 <sup>♦</sup>	0.2	cotton хлопчатобумажные
մետաքսե	0.1	0.1	0.1	0.1	0.1	woolen шерстяные
սպիտակեղեն	0.3	0.3	0.3	0.3	0.2	silk шелковые
թելեր	0.1	0.1	0.1	0.1	0.1	underwear белье
հագուստ	3.3	3.9	4.1	4.3	4.2	threads нити
մանածագործվածքե հագուստ և գուլպեղեն	0.1	0.5	0.5	0.5	0.4	clothing одежда
կոշիկ	1.3	1.5	1.5	1.5	1.4	knitwear, socks and stockings трикотажные и чулочно-носочные изделия
մաքրող միջոցներ	0.7	0.6	0.6	0.6	0.7	footwear обувь
ձեռքի օձառ	0.3	0.2	0.2	0.2	0.2	detergents моющие средства
օձանելիք և գեղարարական ապրանքներ	1.1	1.1	1.0	1.0	1.1	toilet soap туалетное мыло
մշակութային-կենցաղային նշանակության ապրանքներ	16.7	15.5	16.7	15.4	13.5	perfume and cosmetics парфюмерия и галантерея
դրանցից՝						of which:
ժամացույցներ և ոսկերչական արտադրատեսակներ	0.2	1.0	0.6	0.6	0.4	из них: clocks, watches, jewellery and related articles часы и ювелирные изделия
հեծանիվներ և մոպեդներ	0.1	0.1	0.1	0.1	0.0	bicycles and motorcycles велосипеды и мопеды
կահույք	1.2	1.0	1.1	1.2	1.1	furniture мебель
գորգեր և և գորգեղեն	0.2	0.1	0.1	0.1	0.1	carpets and carpet coverings ковры и ковровые изделия
շինարարական նյութեր	6.4	6.6	6.1	5.8	5.8	building materials строительные материалы

16.9. ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԾԱՎԱԼԻ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ  
 PHYSICAL VOLUME INDICES OF CONSUMER GOODS SALES  
 ИНДЕКСЫ ФИЗИЧЕСКОГО ОБЪЕМА ПРОДАЖИ ПОТРЕБИТЕЛЬСКИХ ТОВАРОВ

(նախորդ տարվա նկատմամբ,%)

(in % to the previous year)

(к предыдущему году, %)

	2016	2017	2018	2019	2020	
Պարենային ապրանքներ	97.6	104.2	109.1	109.4	85.7	Food products Продовольственные товары
միս և մսամթերք	89.2	100.2	106.7	106.9	111.9	meat and meat products мясо и мясопродукты
ծուկ և ձկնամթերք	80.5	79.6	100.5	107.9	118.8	fish and fish products рыба и рыбопродукты
կենդանական յուղ	75.2	91.9	99.2	101.4	106.2	butter животное масло
բուսական յուղ	92.8	95.0	115.5	117.6	106.8	vegetable oil растительное масло
մարգարին և համանման սննդային յուղեր	87.6	121.4	116.6	103.3	112.7	margarine and similar edible oils маргарин и подобные
կաթ և կաթնամթերք	97.2	111.3	112.2	109.7	104.2	пищевые масла milk and dairy products молоко и молочные
պանիր	101.8	109.9	118.9	105.5	103.2	продукты cheese
ծու	98.1	102.4	119.5	106.4	137.1	сыр eggs
շաքար	86.3	99.4	125.2	112.8	109.3	яйца sugar
շաքարային հրուշակեղեն	110.0	110.8	113.6	116.8	103.4	сахар confectionery products кондитерские изделия
հաց և հացաբուլկեղեն	86.7	90.6	89.4	87.1	101.7	bread and bakery products хлеб и хлебобулочные
ալյուր	87.3	108.4	100.3	95.3	115.0	изделия flour
մակարոնեղեն	87.9	73.9	112.9	119.4	112.9	мука pasta
կարտոֆիլ	103.4	110.0	122.7	95.4	136.2	макаронные изделия potatoes
բանջարեղեն	100.6	105.6	140.8	102.1	132.9	картофель vegetables
մրգեր	170.0	150.3	137.6	112.8	94.8	овощи fruits
ալկոհոլային խմիչք	97.0	95.7	109.6	103.5	72.1	фрукты alcoholic beverages алкогольные напитки
Ոչ պարենային ապրանքներ	96.9	111.4	108.4	113.4	84.2	Non-food products Непродовольственные товары
բամբակյա գործվածք	92.6	131.6	129.2	111.4	97.4	cotton fabrics хлопчатобумажные ткани
բրդյա գործվածք և գլխաշոր	88.1	113.5	130.6	105.4	75.1	woollens and wraps шерстяные ткани и платки
մետաքսե գործվածք	89.7	104.9	107.8	96.6	70.4	silk fabrics шелковые ткани
հագուստ	126.8	127.9	108.6	111.8	82.8	clothing одежда
մանածագործվածքե հագուստ	88.8	121.5	125.3	103.1	94.7	knitwear трикотажные изделия
գուլպեղեն	123.8	116.8	105.5	103.7	75.6	hosiery чулочно-носочные изделия
կոշիկեղեն	109.6	122.6	106.1	108.0	80.5	footwear обувь

	2016	2017	2018	2019	2020	
տնտեսական օճառ	102.0	91.2	102.6	95.9	98.8	laundry soap хозяйственное мыло
մաքրող միջոցներ	90.4	101.3	110.7	115.6	97.9	detergents моющие средства

16.10. ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԸ  
SALES OF BASIC HOUSEHOLD DURABLE GOODS  
ПРОДАЖА ОСНОВНЫХ ПОТРЕБИТЕЛЬСКИХ ТОВАРОВ ДЛИТЕЛЬНОГО ПОЛЬЗОВАНИЯ

(1 000 հաա)

(1 000 units)  
(1 000 штук)

	2016	2017	2018	2019	2020	
Ժամացույցներ	73.0	71.8	70.5	67.7	28.0	Clocks and watches Часы
Սառնարաններ և սառցարաններ	36.9	42.0	45.4	47.4	25.5	Refrigerators and freezers Холодильники и морозильники
Լվացքի մեքենաներ	37.4	40.0	42.2	44.7	17.8	Washing machines Стиральные машины
Էլեկտրափոշեկուլներ	25.4	37.8	41.9	43.1	22.2	Electric vacuum cleaners Электропылесосы
Հեծանիվներ և մոպեդներ	4.3	4.4	6.0	6.1	2.5	Bicycles and mopeds Велосипеды и мопеды
Աուդիոսարքավորանքներ	45.4	44.4	42.9	44.5	18.9	Audio equipment Аудиооборудование
Ռադիոընդունիչ սարքեր	2.2	1.6	1.4	1.1	0.7	Radio receivers Радиоприемные устройства
Հեռուստացույցներ	36.0	39.1	42.5	48.1	21.4	TV sets Телевизоры

16.11. ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

MAIN INDICATORS OF SHOPS

ОСНОВНЫЕ ПОКАЗАТЕЛИ МАГАЗИНОВ

	2016	2017	2018	2019	2020	
Խանութների քանակը, միավոր	14 486	14 296	14 412	16 660	16 938	Number of shops, units Число магазинов, единица
Դրանց առևտրային մակերեսը ընդամենը, 1 000 մ <sup>2</sup>	743.5	732.3	750.0	861.6	883.4	Shopping floor space Их торговая площадь total, 1 000. m <sup>2</sup> всего, 1 000 м <sup>2</sup>
միջինը մեկ խանութի հաշվով, մ <sup>2</sup>	51.3	51.2	52.0	51.7	52.2	average per shop, m <sup>2</sup> в среднем на один магазин, м <sup>2</sup>
10 000 բնակչի հաշվով, մ <sup>2</sup>	2 484.7	2 457.9	2 526.1	2 908.4	2 983.0	per 10 000 population, m <sup>2</sup> на 10 000 населения, м <sup>2</sup>

16.12. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ

AVAILABILITY OF FIXED ASSETS IN TRADE UNITS

НАЛИЧИЕ ОСНОВНЫХ СРЕДСТВ В ТОРГОВЫХ ОБЪЕКТАХ

	2016	2017	2018	2019	2020	
Հիմնական միջոցները տարեվերջին (ըստ սկզբնական արժեքի) ընդամենը, մլն. դրամ	133 448.7	142 043.9	144 897.6	175 277.7	193 394.6	Fixed assets at the end of year (according to primary value) total, mln. drams Основные средства на конец года (по первоначальной стоимости) всего, млн. драм
դրանցից՝						of which:
շենքեր	61 176.9	46 611.3	46 205.4	51 565.7	52 591.7	из них: dwellings здания
մեքենաներ և սարքավորումներ	23 234.8	25 609.0	29 867.3	31 399.0	39 633.3	machines and equipment машины и оборудования
տրանսպորտային միջոցներ	15 414.2	22 391.3	23 353.9	27 932.2	31 834.8	transport means транспортные средства

Ընդամենի նկատմամբ, %

In % to total

К итогу, %

	100	100	100	100	100	
Հիմնական միջոցները տարեվերջին (ըստ սկզբնական արժեքի) ընդամենը, մլն. դրամ	100	100	100	100	100	Fixed assets at the end of year (according to primary value) total, mln. drams Основные средства на конец года (по первоначальной стоимости) всего, млн. драм
դրանցից՝						of which:
շենքեր	45.8	32.8	31.9	29.4	27.2	из них: dwellings здания
մեքենաներ և սարքավորումներ	17.4	18.0	20.6	18.0	20.5	machines and equipment машины и оборудования
տրանսպորտային միջոցներ	11.5	15.8	16.1	16.0	16.5	transport means транспортные средства

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
SERVICES  
УСЛУГИ

16.13. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ <sup>1</sup>  
VOLUME OF SERVICES <sup>1</sup>  
ОБЪЕМ УСЛУГ<sup>1</sup>

(ընթացիկ գներով)

(at current prices)  
(в текущих ценах)

	2016	2017	2018	2019	2020	
Ընդամենը ծառայություններ, մլն. դրամ որից՝ անհատական	1 247 165.0 13 297.5	1 434 321.2 14 862.7	1 725 840.2 18 283.5	1 993 439.3 17 976.1	1 721 735.5 8 871.3	Total services, mln. drams Всего услуг, млн. драмов of which: из них: personal services индивидуальные
Նախորդ տարվա նկատմամբ, % In % of previous year К предыдущему году, %						
Ընդամենը ծառայություններ որից՝ անհատական	106.9 97.6	114.6 110.5	119.0 122.6	114.6 97.5	86.0 49.1	Total services Всего услуг of which: из них: personal services индивидуальные

<sup>1</sup> Առանց ավելացված արժեքի հարկի և այլ անուղղակի հարկերի:  
Excluding value added tax and other indirect taxes.  
Без налога на добавленную стоимость и других косвенных налогов.



16.14. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ  
 VOLUMES OF SERVICES BY TYPES  
 ОБЪЕМЫ УСЛУГ ПО ВИДАМ

(մլն. դրամ)

(mln. drams)  
(млн. драмов)

	2016	2017	2018	2019	2020	
Ընդամենը	1 247 165.0	1 434 321.2	1 725 840.2	1 993 439.3	1 721 735.5	Total Всего
Կացության և հանրային սննդի կազմակերպում	94 387.9	112 035.6	150 901.7	194 257.4	114 333.8	Accommodation and food service activities Организация проживания и общественного питания including: в том числе: food and beverage service activities
այդ թվում՝						организация общественного питания
հանրային սննդի կազմակերպում	71 427.0	83 608.5	116 404.2	152 463.3	97 847.9	accommodation
կացության կազմակերպում	22 960.9	28 427.1	34 497.5	41 794.1	16 485.9	организация проживания
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	203 710.6	249 766.3	338 451.6	420 755.7	339 450.8	Arts, entertainment and recreation Культура, развлечения и отдых
Կրթություն	51 864.9	52 925.4	54 333.1	56 641.4	53 982.3	Education Образования
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	47 292.7	56 569.1	74 055.1	87 328.5	87 915.1	Human health and social work activities Здравоохранение и социальное обслуживание населения of which: из них:
որից՝						human health activities
առողջապահություն	45 504.4	54 551.9	70 941.9	84 172.2	85 685.1	здравоохранения
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	46 378.1	50 386.9	59 157.4	64 510.4	60 547.6	Real estate activities Операций с недвижимым имуществом of which: из них:
որից՝						renting and operating of own or leased real estate
սեփական կամ վարձակալված անշարժ գույքի հանձնում վարձակալության	39 613.3	43 329.3	49 562.1	53 363.3	51 761.1	сдача внаем собственного или арендованного недвижимого имущества
Տեղեկատվություն և կապ	222 995.4	233 797.6	245 747.0	272 554.4	290 672.7	Information and communication Информация и связь of which: из них:
որից՝						telecommunications
